

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ ՈՒ

ՃԵՄԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ

Անցած կիսամեակի վերջին ճեմարանական ընտանիքը մի ծանր կորուստ ունեցաւ. գեկտեմբերի 20-ի դիշերուայ 2 ժամին ճեմարանի հիւանդանոցում վախճանուեց Զ. դասարանի աշակերտ Տիգրան Ճամկոչեանը. հանգուցեալը հիւանդացել էր աղիքների տիֆով, որ նրան անժամանակ դերեղման տարաւ ծաղիկ հասակում: Հանգուցեալը Նւդոկիայի թեմի նիքսար քաղաքից էր, ընդունուել էր ճեմարան Գ. դասարան և յայտանի էր որպէս ամենայառաջագէմ և կարգապահ աշակերտներից մէկը: Նրա մահը մեծ վիշտ պատճառեց թէ ուսուցչական խմբին և թէ բոլոր աշակերտներին: Հանգուցեալի վրայ ս. Գայիանէ վանքում դամբանական խօսեց ճեմարանի հայր տեսուչ Բաղրամ վարդապետը, իսկ գերեզմանոցում՝ իւր դասընկերներից Սարգիս Ոսկերչեան և Անդրանիկ Էօլջիւճեան: Թարմ ծաղիկներից պսակներ էին դրել՝ ուսուցչական խումբը, ուսանողները, իսկ դասարանիկները՝ մետաղեայ պսակներ:

Հանգուցեալի յիշատակը յաւերժացնելու համար ուսուցչական խումբը և աշակերտութիւնը մտադիր են նրա հայրենի քաղաքում մի համեստ գրադարան հիմնել:

Մենդեան արձակուրդներին ճեմարանում ըստ սովորութեան արուեստան մի քանի ներկայացումներ և երեկոյթներ: Առաջին գրական-երաժշտական-թատերական երեկոյթը կայացաւ դեկտ. 28-ին առաջին լսարանցիների և Զ. դասարանցիների մասնակցութեամբ. պիէսաններից այդ երեկոյեան խաղացին «Նկարիչներ», «Անամօթը» և Ա. Չեխօվի ռուսերէն լեզուով «Трагикъ по неволѣ»:

Կադանդի երեկոյեան ճեմարանի թատերական գահլիճում շքեղ դարդարուած տօնածառ էր պատրաստուած ճեմարանի վարժոցի երախաների համար. այդ երեկոյեան հրաւիրուած էին նաև նրանց ծնողները. վարժոցականները մի քանի

ոտանաւորներ արտասանեցին, երգեցին և պարեցին տօնա-
ծառի շուրջը, որով թէ իրենք մեծ բաւականութիւն ստա-
ցան և թէ ուրախութիւն պատճառեցին իրենց ծնողներին և
Երեկոյթից յետոյ մի-մի պարկ մերգ ստանալով, վարժոցա-
կանները իրենց ծնողների հետ գոհ սրտով հեռացան ճեմարա-
նից: Ապա ճեմարանի ուսուցչական խումբը աշակերտութեան
հետ միասին հաւաքուելով սեզանատանը՝ միասին ընթրիք
արին և աւուր պատշաճի ճառեր և կենացներ առաջարկեցին:

Յունուարի 1-ին ս. պատարագից յետոյ ճեմարանի ու-
սուցչական խումբը, գլուխ ունենալով հ. անոյշի պաշտօնա-
կաւար պ. Գ. Էղիւեանին, ամբողջ աշակերտութեան հետ
միասին ներկայացաւ Ամենապատիւ Տ. Տեղակալին և շնորհա-
ւորեց Նոր-Տարին:

Յունուարի 3-ի երեկոյեան Գ. դասարանցիները ներկա-
յացրին երեք մանկական պիէս՝ «Ժամացոյց», «Դասարանում»
և «Դող, սիրար դող»:

Յունուարի 4-ի երեկոյեան Դ դասարանցիները խաղացին
«Զբնաղ Մարօ» և «Եադ-ասա», իսկ բարձր դասարանցիներն
ու Ա. լսարանցիները ներկայացրին Մուկէրի «Տղամարդկանց
խրատ» պիէսը:

Բոլոր երեկոյթներին հրաւիրուած էին Մայր Աթոռի միա-
բանները և ճեմարանի ուսուցչական խումբը:



— Երեկոյեան խաղացանքները և խաղացանքները անցան շատ լավ և հաճախեցին իրենց ծնողներին և միասին ընթրիք արին և աւուր պատշաճի ճառեր և կենացներ առաջարկեցին: Յունուարի 1-ին ս. պատարագից յետոյ ճեմարանի ուսուցչական խումբը, գլուխ ունենալով հ. անոյշի պաշտօնակաւար պ. Գ. Էղիւեանին, ամբողջ աշակերտութեան հետ միասին ներկայացաւ Ամենապատիւ Տ. Տեղակալին և շնորհաւորեց Նոր-Տարին: Յունուարի 3-ի երեկոյեան Գ. դասարանցիները ներկայացրին երեք մանկական պիէս՝ «Ժամացոյց», «Դասարանում» և «Դող, սիրար դող»: Յունուարի 4-ի երեկոյեան Դ դասարանցիները խաղացին «Զբնաղ Մարօ» և «Եադ-ասա», իսկ բարձր դասարանցիներն ու Ա. լսարանցիները ներկայացրին Մուկէրի «Տղամարդկանց խրատ» պիէսը: Բոլոր երեկոյթներին հրաւիրուած էին Մայր Աթոռի միաբանները և ճեմարանի ուսուցչական խումբը: